Ա-67

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Գրաֆոգրաֆորեն և խմբագրական, Շնորհակալություն եմ հայտնում գրքի հրատարակման աջակցության համար։

Ն. Մինասյան

ՄԻՆԱՍՅԱՆ ՆԵԼԼԻ ԱՐՏԱՇԵՍԻ

ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ 20-ՐԴ ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ - 21-ՐԴ ԴԱՐԻ ՍԿԶԲԻՆ

Է. 00.02. «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ»
մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2011

Ատենախոսության թեման հաստատվել է Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի Պատմության և իրավագիտության ֆակուլտետում:

Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ՝ Ռ. Ա. Սաֆրաստյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ պատմական գիտությունների դոկտոր՝ Ա. Գ. Ավագյան

պատմական գիտությունների թեկնածու՝ Վ. Հ. Տեր-Մաթևոսյան

Առաջատար կազմակերպություն՝ Երևանի պետական համալսարան

Պաշտպանությունը կայանալու է 2011 թ. դեկտեմբերի 12-ին, ժամը 15:30-ին, ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գիտական աստիճաններ շնորհող ՀՀ ԲՈՀ-ի 006 մասնագիտական խորհրդի նիստում (հասցե՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան պողոտա, 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի գրադարանում:

Սեղմնագիրն առաքված է 2011 թ. նոյեմբերի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ պ.գ.թ. Ռ.Պ. Ղազարյան

1. ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Թուրքիայի հանրապետության կենտրոնասիական քաղաքականության համակողմանի ուսումնասիրությունն ու լուսաբանումն ունի գիտական կարևոր նշանակություն և արդիականություն: Խորհրդային միության փլուզումից հետո Թուրքիայի հետխորհրդային մոտ երկու տասնամյակների արտաքին քաղաքականության կարևորագույն ուղղություններից մեկի նպատակների ու առանձնահատկությունների բացահայտումը ուսումնասիրվող թեման դարձնում է արդիական: Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրները միշտ էլ հետաքրքրել են Թուրքիային: Չպետք է մոռանանք, որ դեռևս Օսմանյան կայսրության ժամանակներից սկսած Թուրքիայի նպատակներից է եղել թյուրքալեզու ժողովուրդներին համախմբել իր իշխանության ներքո: Սա իրականում պանթյուրքիստական գաղափարների դրսևորում էր, որը ներկա փուլում արտահայտվեց գաղափարական, առևտրատնտեսական և կրթամշակութային համագործակցության ամրապնդմամբ:

Արևմտյան, ինչպես նաև թուրք որոշ հեղինակներ առաջարկեցին այն տեսակետը, որ ԽՍՀՄ-ի փլուզման արդյունքում Թուրքիան կորցրեց իր նախկին կարևորությունն Արևմուտքի համար և կանգնեց նոր աշխարհաքաղաքական մեկուսացման իրական վտանգի առջև: Ատենախոսության մեջ այս դրույթը հերքվում է և հիմնավորվում է այն տեսակետը, որ իրականում ԽՍՀՄ-ի փլուզմամբ Թուրքիայի համար ստեղծվեց նպաստավոր աշխարհաքաղաքական իրավիճակ Կենտրոնական Ասիայում իր ազդեցությունը հաստատելու համար, ինչին նպաստում էր Արևմուտքի քաղաքական աջակցությունը և վերոնշյալ տարածաշրջանում Ռուսաստանի Դաշնության ռազմաքաղաքական դիրքերի թուլացումը: Նման պայմաններում Թուրքիան կենտրոնասիական երկրների հետ հաստատեց բազմակողմանի համագործակցություն, կարողացավ հասնել որոշակի հաջողությունների՝ տարածաշրջանում ապահովելով իր ներկայությունը:

Թուրքիայի կենտրոնասիական քաղաքականության կարևորագույն բաղադրիչն է կենտրոնասիական երկրների հետ առևտրատնտեսական հարաբերությունների հաստատումն ու զարգացումը: Այս տարածաշրջանը հարուստ է բնական ռեսուրսներով, մասնավորապես ունի նավթի ու գազի հարուստ պաշարներ, որոնցով հետաքրքրված է ինչպես Թուրքիան, այնպես էլ խոշոր տերությունները: Մյուս կողմից նոր նշանակություն ձեռք բերեց կառուցվող խողովակաշարերի համար պայքարը, որի մասնակիցներից մեկը դարձավ Թուրքիան՝ փորձելով դառնալ տարանցիկ երկիր և դրանով բարձրացնել իր աշխարհաքաղաքական նշանակությունը: Բացի այդ կենտրոնասիական տարածաշրջանը նոր գոտի էր, որտեղ կարող էին իրենց առևտրատնտեսական գործունեությունը ծավալել թուրքական ընկերությունները և տնտեսական առումով այն նվաճել: Թուրքիան ակտիվ առևտրատնտեսական գործունեություն ծավալեց 1990-ական թթ. սկզբներից, որի ծավալները 21-րդ դարի սկզբին ավելացան և ապահովեցին Թուրքիայի ներկայությունը Կենտրոնական Ասիայի երկրների տնտեսություններում:

Թուրքիայի կենտրոնասիական քաղաքականության մյուս կարևոր բաղադրիչն է այս երկրների հետ հարաբերությունների հաստատումն ու զարգացումը կրթության և մշակույթի բնագավառներում, որին նպատակն էր ձևավորել միասնական մշակութային և կրթական համակարգ: Ըստ երևույթին 1990-ական թթ. սկզբներին Թուրքիան կարողացավ որոշակի հաջողություններ ունենալ կենտրոնասիական երկրների կրթամշակութային բնագավառներում, երբ ստեղծվեցին մի շարք կրթական կենտրոններ, միություններ, ֆոնդեր և դպրոցներ: Թյուրքալեզու երկրները ևս շահագրգռված էին այդ համագործակցությամբ: Թուրքիայի նախաձեռնությամբ այս երկրներից շատ երիտասարդներ գնացին Թուրքիա կրթություն ստանալու նպատակով, ավելին թյուրքալեզու երկրներում բացվեցին թուրքական ավագ դպրոցներ, լիցեյներ և համալսարաններ: Լայն կրթական գործունեություն ծավալեց Ֆեթուլլահ Գյուլենի համայնքը և «Թուրքական համագործակցության ու զարգացման գործակալությունը»: Թյուրքական աշխարհին վերաբերող մշակութային միջոցառումներն իրականացնում էր «Թյուրքական մշակույթի և արհեստների միացյալ ղեկավարում» կազմակերպությունը: Կրթամշակութային բնագավառներում կենտրոնասիական երկրների հետ համագործակցությունը հնարավորություն ընձեռեց Թուրքիային տարածաշրջանում իր համար կարևոր աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական նախագծեր իրականացնելու համար:

Թուրքիայի կենտրոնասիական քաղաքականության ձևավորման գործում իր նշանակությունն ունեցավ նաև նրա ՆԱՏՕ-ի անդամ լինելու իրողությունը և Արևմուտքին մոտ գտնվելը: Կենտրոնասիական երկրները Արևմուտքի հետ համագործակցելու համար Թուրքիային դիտարկում էին որպես կամուրջ: Իր հերթին Թուրքիան լինելով ՆԱՏՕ-ի անդամ շահագրգռված էր տարածաշրջանում անվտանգության համակարգի մի մասը դառնալ /հատկապես 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո/ և հասնել ռազմաքաղաքական ազդեցության:

Պետք է նշենք, որ ինչպես Հարավային Կովկասում, այնպես էլ Կենտրոնական Ասիայում Թուրքիայի և Ռուսաստանի միջև ընթացող մրցակցությունն իր ուրույն տեղն ունի Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության մեջ՝ հարկադրելով Թուրքիային սահմանափակել իր հավակնությունները Կենտրոնական Ասիայում:

2002 թ. Թուրքիայի արտաքին քաղաքականության մեջ տեղի ունեցան որոշակի փոփոխություններ, երբ իշխանության գլուխ եկավ իսլամական «Արդարություն և զարգացում» կուսակցությունը /այսուհետև՝ ԱԶԿ/: ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության մեջ կենտրոնասիական ուղղությունը շարունակվեց համարվել կարևոր և կուսակցությունը կենտրոնասիական տարածաշրջանում ակտիվացրեց իր քաղաքականությունը:

Սույն թեման ուղղակիորեն առնչվում է Թուրքիայի արտաքին քաղաքական գերակայությունների իրականացման հետ և նրա համալիր ուսումնասիրությունը մեծ կարևորություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության որոշ խնդիրների ավելի խորը ընկալման համար: Թեմայի ուսումնասիրումը կարևորվում է նաև նրանով, որ

հնարավորություն է տալիս հասկանալու մեր հարևան պետության կենտրոնասիական քաղաքականության ուղղություններն ու նպատակները և դրանց ազդեցությունը Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականության հեռանկարային գործընթացներում:

2. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Ատենախոսության թեմայի ընտրությունը պայմանավորված է 20-րդ դարի վերջին-21-րդ դարի սկզբին Թուրքիայի Հանրապետության տարածաշրջանային քաղաքականության հետ կապված խնդիրների համակողմանի և հիմնավոր ուսումնասիրության անհրաժեշտությամբ, որն իրականացնելու համար հեղինակն իր առջև դրել է հետևյալ խնդիրները.

- հետազոտել ԽՍՀՄ փլուզման հետևանքով Կենտրոնական Ասիայում ստեղծված քաղաքական իրողությունների պայմաններում Թուրքիայի համար ի հայտ եկած աշխարհաքաղաքական նոր հեռանկարները,
- պարզաբանել Կենտրոնական Ասիայում Թուրքիայի աշխարհաքաղաքական և քաղաքական դիրքերի ամրապնդմանն ուղղված քայլերը և դրան նպաստող հիմնական գործոնները,
- ուսումնասիրել Թուրքիայի կենտրոնասիական քաղաքականության ակտիվացումը և դրա հիմնական նախադրյալները,
- վերլուծել Կենտրոնական Ասիայում Թուրքիայի և Իրանի մրցակցությունը, Ռուսաստանի դիրքորոշումը, ինչպես նաև թուրք-չինական մրցակցությունը և նրա առանձնահատկությունները,
- բացահայտել այն բոլոր հանգամանքները, որոնք նպաստեցին «թուրքական զարգացման նմուշաձևի» գրավիչ դառնալուն, ապա նաև կենտրոնասիական երկրների կողմից նրա մերժմանը,
- ցույց տալ տարածաշրջանում Թուրքիայի ծավալած առևտրատնտեսական գործունեությունը և դրա հետևանքները
- ներկայացնել Կենտրոնական՝ Ասիայում Թուրքիայի իրականացրած գործողությունների գաղափարական հիմքերը, ծավալած կրթամշակութային գործունեությունը՝ այդ թվում ամերիկաբնակ մուսուլմանական գաղափարներ քարոզող Ֆ. Գյուլենի շարժման կողմից իրականացրած միջոցառումները, որոնց աջակցում էր թուրքական կառավարությունը,
- բացահայտել ԱԶԿ-ի կենտրոնասիական քաղաքականության նոր միտումները, ներկայացնել կուսակցության իրականացրած ծրագրերը և միջոցառումները այս տարածաշրջանում,
- բացահայտել Թուրքիայի պանթյուրքիստական քաղաքականությունը և նպատակները Կենտրոնական Ասիայում: Ներկայացնել «Թուրքական համագործակցության և զարգացման գործակալության» և Թյուրքալեզու երկրների գագաթնաժողովների գործունեությունը որպես պանթյուրքիզմի դրսևորումներ և դրանց արդյունքները:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹԸ

Թուրքիայի կենտրոնասիական քաղաքականության հետ կապված առանձին խնդիրներ, մասնավորապես հետխորհրդային շրջանում արտաքին քաղաքականության վերածնման, եվրասիականության գաղափարների, նոր կառուցվող խողովակաշարերի հետ կապված Թուրքիայի իրականացրած գործողությունները, առևտրատնտեսական հարաբերությունները, ռուս-թուրքական հակամարտությունը ներկայացվել են հայրենական պատմագրության մի շարք ներկայացուցիչների գիտական հոդվածներում: Վերոհիշյալ խնդիրները ուսումնասիրվել են նաև արտասահմանյան պատմագրության ներկայացուցիչների կողմից: Սակայն Թուրքիայի հետխորհրդային /մոտ երկու տասնամյակների/ կենտրոնասիական քաղաքականության խնդիրները և նպատակները, նրա հիմնական ուղղությունները և գործողությունները չեն դարձել գիտական ամբողջական ուսումնասիրության առարկա:

Ատենախոսության թեման հայրենական թուրքագիտության մեջ դեռևս չի արժանացել առանձին և համակողմանի ուսումնասիրության: Այս աշխատանքն իր բովանդակությամբ և հարցադրումներով փորձ է՝ ընդարձակ փաստական նյութի, Թուրքիայի հանրապետության պետական ծրագրերի, պետական մարմինների զեկույցների, հաշվետվությունների և գիտական աշխատությունների ուսումնասիրությամբ համալիր ներկայացնել Թուրքիայի տարածաշրջանային քաղաքականությունը, նպատակները և տարածաշրջանային հավակնությունների հեռանկարները:

4. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Ժամանակագրական տեսանկյունից ատենախոսությունն ընդգրկում է Կենտրոնական Ասիայի երկրների անկախությունից մինչև 21-րդ դարի առաջին տասնամյակն ընկած ժամանակահատվածը (20-րդ դարի 90-ական թթ. սկզբից մինչև «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման առաջին շրջանը՝ 2007 թ.): Նման ժամանակագրական սահմանների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ ԽՍՀՄ փլուզման արդյունքում Կենտրոնական Ասիայում ստեղծվել էին քաղաքական նոր իրողություններ: Հետխորհրդային առաջին տասնամյակում Թուրքիան սկսեց ակտիվ ջանքեր գործադրել՝ ներթափանցելու հետխորհրդային տարածաշրջան: Օգտվելով 1990-ական թթ. սկզբներին կենտրոնասիական երկրների հետ ձևավորած սերտ հարաբերություններից՝ Թուրքիան փորձում էր ոչ միայն Կենտրոնական Ասիայում ամրապնդել իր դիրքերը, այլև ավելացնել իր ազդեցությունը Ռուսաստանի Դաշնության դիրքերի թուլացման հաշվին: Մյուս կողմից 2002 թ. Թուրքիայում իշխանության գլուխ եկավ իսլամական ԱԶԿ-ն և սկսեց մշակել արտաքին քաղաքականության նոր կուրս, որում դարձյալ կարևորվեց կենտրոնասիական ուղղությունը:

5. ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ

Աշխատության մեթոդաբանական հիմքում դրված է Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի երկրների քաղաքական հարաբերությունների, դրանց ընթացքի և այն պայմանավորող գործոնների հետ կապված տարբեր հարցադրումների, տեսակետների և աղբյուրագիտական նյութի վերլուծությունն ու փաստերի համեմատական-համադրական ուսումնասիրությունը: Շարադրման ընթացքում հետևելով դեպքերի հաջորդականությանն ու իրադարձությունների տրամաբանական ընթացքին, համադրելով տարաբնույթ սկզբնաղբյուրներ, բաղդատելով հիմնահարցի վերաբերյալ տարբեր, հաճախ իրարամերժ տեսակետներ, ձգտել ենք անկողմնակալ լուսաբանել տարածաշրջանային զարգացումները, իրադարձությունների փոխկապակցվածության տրամաբանությամբ բացահայտել պատմական ճշմարտությունը՝ հավատարիմ մնալով անաչառության ու պատմա-քննական սկզբունքներին: Աշխատանքի տեսամեթոդաբանական հիմք հանդիսացող գիտական օբյեկտիվության, պատմահամեմատական և պատմա-քննական սկզբունքները, գիտական ընդհանրացման, կառուցվածքային և համակարգային մեթոդները հնարավորություն են տվել հեղինակին գիտական ընդհանրացման հիմքի վրա ատենախոսության մեջ արծարծված խնդիրները դիտարկել ոչ թե առանձնացված, այլ տարաժամանակային համընդհանուր միասնության մեջ:

6. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության մեջ առաջ քաշած հիմնական դրույթները, մեկնաբանություններն ու եզրահանգումները կարող են օգտակար լինել Թուրքիայի նորագույն պատմության արտաքին քաղաքականության հիմնական հարցերին նվիրված ուսումնասիրություններում: Բացի այդ աշխատության դրույթները կարող են օգտակար լինել պետական համապատասխան մարմինների համար վերլուծական նյութեր պատրաստելու, նաև տարածաշրջանային հիմնահարցերում Թուրքիայի դիրքորոշումն ավելի հստակ պատկերացնելու համար:

7. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսությունը հաստատվել է ՀՊՄՀ-ի Պատմության և իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել ՀՊՄՀ-ի Պատմության և

իրավագիտության ֆակուլտետի Համաշխարհային պատմության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի նիստում:

Աշխատության հիմնական դրույթներն ու եզրահանգումները ներկայացվել են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, նաև երիտասարդ արևելագետների հանրապետական գիտաժողովներում ներկայացված զեկույցներում:

8. ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսության շարադրման ընթացքում օգտվել ենք բազմաբնույթ սկզբնաղբյուրներից, այն է՝ թուրքական կառավարության ընդունած զարգացման երկարաժամկետ ու կարճաժամկետ ծրագրերը, կառավարության որոշումները, պետական միջոցառումների ու դիվանագիտական աշխատանքների արձանագրությունները, ամենամյա հաշվետվությունները, պետական ու քաղաքական գործիչների զեկուցագրերը, բազմալեզու մամուլը, փաստաթղթերի ժողովածուները, հիմնախնդրի առանձին հարցերի հետ առնչվող հրապարակի վրա եղած հարուստ գրականությունից, այդ թվում գիտական հոդվածներից և հետազոտություններից: Փաստական նյութերի սկզբնաղբյուր է ծառայել համացանցը, մասնավորապես թուրքական պետական գերատեսչությունների կայքէջերը (www.ekutup.dpt.gov.tr, www.meb.gov.tr, www.deik.org.tr, www.tika.gov.tr, www.basbakanlik.gov.tr, www.dtm.gov.tr, www.byegm.gov.tr, www.mfa.gov.tr):

Ատենախոսության մեջ քննարկվող խնդիրների ուսումնասիրության հիմնական սկզբնաղբյուրներ են Թուրքիայի Հանրապետության Պետական պլանավորման խորհրդի հինգամյա զարգացման ծրագրերը[1], Թուրքիայի Ազգային կրթության նախարարության[2], «Արտաքին տնտեսական կապերի խորհրդի» և «Թյուրքական համագործակցության ու զարգացման գործակալության» կենտրոնասիական երկրներում կատարած աշխատանքների վերաբերյալ ամենամյա հաշվետվություններն ու զեկույցները: Դրանցում պարունակվում են հարուստ փաստական նյութեր Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև հարաբերությունների հաստատման, նաև տարբեր բնագավառներում համագործակցության

[1] Altıncı Beş Yıllık Kalkınma Planı (1990-1994), Ankara, 1989, http://ekutup.dpt.gov.tr/plan/plan6.pdf, Yedinci Beş Yıllık Kalkınma Planı (1996-2000), Ankara, 1995, http://ekutup.dpt.gov.tr/plan/vii/plan7.pdf, T. C. Başbakanlık Devlet Planlama Teşkilatı Müsteşarlığı, Yedinci Beş Yıllık Kalkınma Planı, Dünyada Küreseleşme ve Bölgesel Entegrasyonlar (AT, NAFTA, PASİFİK) ve Türkiye (AT, EFTA, KEİ, Türk Cumhuriyetleri, İslam Ülkeleri, ECO) İlişkileri Özel İhtisas Komisyonu, Türkiye-Türk Cumhuriyetleri İlişkileri Raporu Özeti, Kitap 5, Ağustos 1995, http://ekutup.dpt.tr/kuresell/oik471.pdf, Türkiye ile Türk Cumhuriyetleri ve Bölge Ülkeleri İlişkileri Özel İhtisas Komisyonu Raporu, Sekizinci Beş Yıllık Kalkınma Planı, T. C. Başbakanlık Devlet Planlama Teşkilatı Müsteşarlığı, Yayın No. DPT:2511-ÖİK:528, Ankara, 2000, T. C., http://www.ekutup.dpt.gov.tr/disekona/oik528.pdf, Eigth Five-Year Devolopment Plan 2001-2005, Ankara, 2001, http://ekutup.dtp.gov.tr/plan/viii/plan8.pdf

[2] Turkish Ministry of Educational Statistics, http://www.meb.gov.tr/Stats/ist97/MYHTML45.htm.

զարգացման վերաբերյալ: Հատկապես կարևոր են «Արտաքին տնտեսական կապերի խորհրդի» հաշվետվություններն ու զեկույցները, որոնցում թվական տվյալներով ներկայացվում է Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև տնտեսական, մասնավորապես առևտրային համագործակցության ծավալները[3]: «Թյուրքական համագործակցության ու զարգացման գործակալության» զեկույցներում ներկայացված են կենտրոնասիական երկրներում Թուրքիայի հետաքրքրությունները և գործողությունների ծրագրերը, ինչպես նաև իրականացրած միջոցառումներն այս երկրների կրթության, գիտության, մշակույթի և տնտեսության բնագավառներում[4]: Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ Թուրքիայի իրականացրած քաղաքականության կարևոր սկզբնաղբյուրներ են նաև թուրքական կառավարությունների ծրագրերը, որոնցում նշվում է այս երկրների հետ բազմակողմանի համագործակցության ռազմավարությունը[5]:

Թեմայի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունեն թուրք հեղինակներ Բասկըն Օրանի[6], Մուսթաֆա Այդընի[7], Ահմեդ

[3] Bilateral Relation with Uzbekistan. DEIK, http://www.deik.org.tr/Pages/TR/IK_Ticarilliskiler.Detay.aspx?tiDetId=23&IKID=34, Trade Statistics, Undersecretariat for Foreign Trade of Turkey, 2006, Ankara and Country Reports of Turkish Foreign Economic Relations Board (DEIK), Istanbul, www.dtm.gov.tr/ead/ulkegos/ulkegos.htm and deik.org, Kazakistan Ülke Bülteni, DEIK, Şubat 2007, http://www.deik.org.tr/Lists/Bulten/Attachments/101/kazakistan%20bulten%20subat%202007_TR.pdf, Kırgızistan Ülke Bülteni, DEİK, Mayıs 2009, http://www.deik.org.tr/Lists/Bulten/Attachments/147/Kirgizistan-bulten-Mayis%202009_TR.doc, Türkiye-Özbekistan Ticari ve Ekonomik İlişkileri, DEİK, Mayıs 2006, http://www.deik.org.tr/Lists/Ticarilliskiler/Attachments/23/Microsoft%20Word%20-%20Ozbekistan-ikililiiskiler-mart2006_TR.pdf, Tacikistan Ülke Bülteni, DEİK, Haziran 2009, http://www.deik.org.tr/Lists/Bulten/Attachments/173/Tacikistan%20ulke%20bulteni_mayis_2009_TR.pdf

[4] TICA. Kazakhstan, http://tika.gov.tr/EN/Icerik.ASP?ID=326, TICA. Projects in Kyrgyzstan, http://www.tika.gov.tr/EN/Icerik.ASP?ID=331, TICA. Projects in Kazakhstan, http://www.tika.gov.tr/EN/Icerik.ASP?ID=330, Türkmenistan Ülke Raporu, TİKA, 2009, http://www.tika.gov.tr/yukle/dosyalar/ULKERAPORLARI/Turkmenistan_UlkeRaporu.pdf, Özbekistan Ülke Raporu, TİKA, 2009, http://www.tika.gov.tr/yukle/dosyalar/ULKERAPORLARI/Özbekistanraporu_2007.pdf, Ozdenoğlu Selda, Kirgiz Cumhuriyeti (Kirgiz Republic), TİKA, Ankara, 2005, http://www.tika.gov.tr/Dosyalar/Kirgizistan.doc

[5] Başbakan Abdullah Gül Tarafından TBMM'ne sunulan 58'inci Hükümet Programı, Ankara, 23 Kasım 2002, T. C. 60. Hükümet Programı, Eylem Planı, 10 Ocak 2008, http://ekutup.dpt.gov.tr/plan/ep2008.pdf, 59. Hükümet Programı, http://www.basbakanlik.gov.tr/docs/hukumetprgtr.doc

[6] Oran Baskın, Türk Dış Politikası, Cilt II. 1980-2001, İletişim Yayınları, İstanbul, 2001.

[7] Aydın Mustafa, New Geopolitics of Central Asia and the Caucasus: Causes of Instability and Predicament. SAM Papers, 2/2000 http://www.sam.gov.tr/sampapers/NewGeopoliticsofCentralAsiaandtheCascasus.pdf, Aydın Mustafa, Regional Cooperation in the Black Sea and the Role of Institutions, Perseption- Journal of International Affairs, Vol. 10, Autumn 2005, p. 57-83, Aydın Mustafa, Foucault's Pendulum: Turkey in Central Asia and the Caucasus, Turkish Stadies, 5:2, http://www.informaworld.com/smpp/title~content=t713636933, Aydın Mustafa, Turkish Foreign

Դավութօղլուի[8], Բյուլենթ Արասի[9], Իդրիս Բալի[10], Զիյա Օնիշի[11], Քարա Մեհմեդի[12], էրթան էֆեգիլի[13], Մեհմեդ Օգյութչյուի[14] աշխատությունները: Նրանցում առկա են մի շարք կարևոր փաստեր ինչպես 1990-ական թթ., այնպես էլ 21-րդ դարի սկզբներին Կենտրոնական Ասիայում Թուրքիայի քաղաքականության մասին: Ներկայացվում է այս տարածաշրջանում ռուս-թուրքական և թուրք-իրանական մրցակցությունը, ինչպես նաև Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ Թուրքիայի հետաքրքրությունների պատճառները և համագործակցության նախադրյալները: Մասնավորապես Մուսթաֆա Այդընի ուսումնասիրություններում թեև առկա են որոշ կանխակալ մոտեցումներ Թուրքիայի կենտրոնասիական քաղաքականության մի շարք խնդիրների նկատմամբ, այնուամենայնիվ պետք է նշել, որ նրա աշխատությունները մեծ մասամբ օբյեկտիվորեն արտացոլում են տվյալ ժամանակաշրջանի Թուրքիայի կենտրոնասիական քաղաքականության

Policy: Framework and Analysis, Ankara, Stratejik Araştırmalar Merkezi, December, SAM-PAPER, 1/ 2004, p. 111, Aydin Mustafa, Geopolitica of Central Asia and the Caucasus; Continuity and Change Since the End of the Cold War, The Turkish Yearbook, Vol. XXXII, p. 167-216.

[8] Davutoğlu Ahmet, Stratejik Derinlik, Istanbul, 2001, Davutoğlu Ahmet, Turkey's Foreign Policy Vision: An Assessment of 2007, Insight Turkey, Cilt 10, Sayı 1, 2008, s. 77-96.

[9] Aras Bülent, US-Central Asia Relations: A View From Turkey, MERIA, Vol. 1, No. 1-January, 1997, , http://meria.idc.ac.il/journal/1997/issue1/jv1n1a4.html, Aras Bülent, Turkey's Policy in the Former Soviet South: Assets and Options, Turkish Studies, 1:1, 2000, p. 36-58, Aras Bülent, Turkish Foreign Policy Towards Iran: Idelogy and Foreign Policy in Flux, Journal of Third World Studies, Vol. 18, No. 1, Spring 2001, p. 105-124, Aras Bülent and Omer Caha, Fethullah Gulen and his Liberal "Turkish Islam" Movement, The Middle East Review of International Affairs-MERIA, Vol. 4, No. 4, December 2000, p. 30-42, http://meria.idc.ac.il/journal/2000/issue4/aras-caha.pdf

[10] Bal Idris, The Turkish Model And The Turkic Republics.-Perceptions: Journal of International Affairs, Vol. 3, No. 3, September-November 1998, http://sam.gov.tr/perceptions/Volume3/September-November1998/bal.PDF, Bal Idris, Turkey's Relations with the West and Turkic Republics. Rise and Fall of the Turkish Model, England, Ashgate Publishing, Bal Idris, Turkish Model as a Foreign Policy Instrument in Post Cold War Era: The Cases of Turkic Republics and the Post September 11th Attacks Era, p. 8, http://www.idrisbal.com.homepage.

[11] Oniş Ziya, Turkey and Post-Soviet States: Potential and Limits of Regional Power Influence, MERIA, Vol. 5, No. 2, June, 2001, p. 66-74, Öniş Z. & Yılmaz S., Between Europeanization and Euro-Asianism: Foreign Policy Activism in Turkey During the AKP Era, Turkish Studies, Vol.10, No. 1, March 2009, p. 7-24, Öniş Ziya, The New Wave of Foreign Policy Activism in Turkey, Drifting Away From Europanization?, Danish Institute For International Studies (DIIS) Report, 2009:05, January 2009, Öniş Ziya, Multiple Face of the "New" Turkish Foreign Policy: Underlying Dynamics and a Critique, Insight Turkey Vol. 13, No. 1, 2011, p. 47-65.

[12] Kara Mehmet, Türk Cumhuriyetleri ve Otuz Dört Harfli Ortak Latin Alfabesi, Turkish Studies, International Periodical for the Languages, Literature and History of Turkish or Turkic, Vol. 4/3, Spring 2009, p. 1301-1310.

[13] Efegil Ertan, Russian Policy in Central Asia, Central Asian and the Caucasus, No. 5, 2000, p. 98-105.

[14] Öğütçü Mehmet, TURKEY AND CHINA, http://egemenlikulusundur.org/ustat/ulastra/ogutcu1.html, Öğütçü Mehmet, Caspian Energy "Poker Game" And Turkey: Prospects for a New Approach, the CEPMLP Internet Journal, Vol. 8, Abstract 5, April 2001, www.dundee.ac.uk/cepmip/journal/html/vol8/vol8-5.html.

հիմնական գերակայությունները: Նա իր «Կենտրոնական Ասիայի և Կովկասի նոր աշխարհաքաղաքականությունը. անկայունության պատճառները և դժվարին իրավիճակներ» հոդվածում հստակորեն ներկայացնում է հետխորհրդային ժամանակաշրջանում Կենտրոնական Ասիայում և Կովկասում Թուրքիայի հիմնական ակնկալիքներն և գործողություններն: Միևնույն ժամանակ անդրադառնում է նաև կենտրոնասիական կոնֆլիկտներին և իրավամբ նշում Ռուսաստանի դերը դրանց կարգավորման գործում[15]:

«Արդարություն և զարգացում» կուսակցության արտաքին քաղաքականության հիմնական ուղղությունների, այդ թվում կենտրոնասիական, ներկայացված է Ահմեդ Դավութօղլուի «Ռազմավարական խորություն» աշխատությունում: Հեղինակը պնդում է, որ Թուրքիան պետք է ակտիվ արտաքին քաղաքականություն իրականացնի Մերձավոր Արևելքում, Բալկաններում, Սև և Միջերկրական ծովերի ավազաններում, Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Նա մեծ տեղ է հատկացնում Թուրքիայի աշխարհաքաղաքական, աշխարհամշակութային և աշխարհատնտեսական դերին՝ փորձելով Թուրքիային վերածել «կենտրոնական պետության»[16]: Հեղինակը միակողմանի է ներկայացնում փաստերը, որպեսզի տարածաշրջանում Թուրքիայի դերը չափազանցնի:

Հարկ է առանձնացնել թուրք հեղինակներ Յազգըն Թուրանի[17], Բայրամ Բալջըի[18], Մուստաֆա Սենի /Շեն/[19], Յաշար Սայընի[20] աշխատությունները, որոնք անդրադարձել են Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների միջև կրթամշակութային հարաբերություններին, այդ թվում նաև Ֆեթուլլահ Գյուլենի շարժմանն ու գործունեությանը: Հատկապես կարևոր է Բայրամ Բալջըի «Ֆեթուլլահ Գյուլենի միսիոներական դպրոցները Կենտրոնական Ասիայում և դրանց դերը թուրքիզմի ու իսլամի տարածման գործում» հոդվածը: Հեղինակը եղել է Կենտրոնական Ասիայում և անձամբ ուսումնասիրել Գյուլենի գործունեությունը: Նա անաչառ կերպով ներկայացնում է Գյուլենի հետապնդած նպատակները և՝ շարժման կառուցվածքն ու գաղափարախոսությունը:

---

[15] Aydın Mustafa, New Geopolitics of Central Asia and the Caucasus: Causes of Instability and Predicament. SAM Papers, 2/2000 http://www.sam.gov.tr/sampapers/NewGeopoliticsofCentralAsiaandtheCascasus.pdf

[16] Davutoğlu Ahmet, Stratejik Derinlik, Istanbul, 2001.

[17] Yazgan Turan, Türkiyenin Türk Dünyasındaki Eğitim-Öğretim Faliyetleri, Kamu-İş, Cilt 7, Sayı 2, 2003, s. 2-21.

[18] Balcı Bayram, Fethullah Gülen's Missionary Schools in Central Asia and their Role in the Spreading of Turkism and Islam, Religion, State & Society, Vol. 31, No. 2, 2003, p. 151-177.

[19] Mustafa Sen, Turkish Islamist Entrepreneurs in Central Asia in Prospect for Democracy in Central Asia, ed. Birgit N. Schylter, Istanbul, Swedish Research Institute, 2005.

[20] Yaşar Sayı, Turkish Schools and Universities in Kyrgyzstan. The Times of Central Asia, June 2006, http://www.turkishweekly.net/comments.php?id=2134

Ատենախոսության մեջ քննարկվող մի շարք հարցերի լուսաբանմանը և ճիշտ ընկալմանը մեծապես նպաստել են Ռ. Սաֆրաստյանի[21], Վ. Տեր-Մաթևոսյանի[22], Գ. Արշակյանի[23], Լ. Հովսեփյանի[24], Հ. Դեմոյանի[25], Ի. Մուրադյանի[26] արժեքավոր աշխատությունները, որոնք նպաստում են 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին Թուրքիայի արտաքին քաղաքականության ուղղությունների, այդ թվում կենտրոնասիական, ամբողջական ուսումնասիրման և դրանց նպատակների ներկայացման համար: Օրինակ Ռուբեն Սաֆրաստյանն իր «Թուրքիայի քաղաքականությունը սեպտեմբերի 11-ի ողբերգությունից հետո (2001 թ.)» հոդվածում ոչ միայն հանգամանորեն անդրադառնում է 1990-ական թթ. սկզբներին եվրասիականության գաղափարներին, Թուրքիայի քաղաքական շրջանակների կողմից դրանց արտահայտմանն ու հետապնդած նպատակներին, այլև վերլուծում է

[21]Սաֆրաստյան Ռ., Ռուսաստանը և Թուրքիան Հարավային Կովկասում, աշխարհառազմավարական գինադադար 21-րդ Դար, թիվ 4 (10), 2005, էջ 34-46, Սաֆրաստյան Ռ., Հնարավոր չէ 21-րդ դարում պատնեշներ ստեղծել հարևանների միջև..., Երևան, 2003, Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի քաղաքականությունը սեպտեմբերի 11-ի ողբերգությունից հետո (2001 թ.), Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 1, Եր., 2002, էջ 89-103, Сафрастян Р., Об идеологическом обосновании региональной политики Турции: Концепция Евразии, Южный Кавказ: региональная безопасность и стабилность. Материалы конференции под общей редакцией Гаянэ Новиковой: Редакторы А. Мельян, С. Саркисян. Перевод А. Мельян, Ереван, 2004, с. 70-77.

[22]Տեր-Մաթևոսյան Վ., Իսլամը Թուրքիայի հասարակական-քաղաքական կյանքում (1970-2001 թթ.), Եր., 2008, Ter-Matevosyan V., Islamic Socio-Political Movements in Turkey in The 1970-1990s, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 7, Եր., 2011, էջ 205-220:

[23] Արշակյան Գ., Թուրքիայի քաղաքականությունը Հարավային Կովկասում 1991-2001 թթ., Երևան, 2009:

[24] Հովսեփյան Լ., Թուրքիա-Չինաստան առևտրատնտեսական հարաբերությունների շուրջ, Թուրքիա. էներգետիկան և միջազգային տնտեսական կապերը, թողարկում 2, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, Եր., 2008, էջ 157-167, Հովսեփյան Լ., Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում 1990-ական թթ. որպես եվրասիական քաղաքականության կարևորագույն ուղղություն. ձեռքբերո՞ւմ, թե՞ ձախողում, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 5, Երևան, 2008, էջ 158-176, Овсепян Л., Турецкая модель и обусловленность внешней политики Анкары в странах Центральной Азии стратегическими интересами Запада, Центральная Азия и Кавказ, No. 2 (62), 2009, с. 130-137, Овсепян Л., Иванов В., Военно-политические аспекты сотрудничества Турции со странами Южного Кавказа (Азербайджан, Грызия) и Центральной Азии, Ереван, 2010.

[25] Դեմոյան Հ., Առևտրատնտեսական կապերի հաստատումն ու խորացումը Թուրքիայի և ԱՊՀ-ի թուրքալեզու հանրապետությունների միջև, Թուրքիա. էներգետիկան և միջազգային տնտեսական կապերը, Քաղաքական հետազոտությունների ինստիտուտ, թողարկում 2, Եր., 2008, էջ 168-187, Демоян Г., Турция и Карабахский конфликт, Ереван, 2006.

[26] Մուրադյան Ի., Տարածաշրջանային հիմնախնդիրները, «Արդարություն» մատենաշար-թիվ 2, Ե., 2004:

սեպտեմբերի 11-ի դեպքերի ազդեցությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության վրա[27]: Լևոն Հովսեփյանն իր «Թուրքական մոդելը և Արևմուտքի ստրատեգիական հետաքրքրություններով պայմանավորված Անկարայի արտաքին քաղաքականությունը Կենտրոնական Ասիայի երկրներում» հոդվածում անդրադառնում է 1990-ական թթ. սկզբներին Կենտրոնական Ասիայի նկատմամբ Թուրքիայի իրականացրած քաղաքականությանը, որն արտահայտվեց «թուրքական մոդելի» առաջադրմամբ: Հեղինակը իրավացիորեն ներկայացնում է, որ այն առաջադրվել է Արևմուտքի կողմից, նպատակ ունենալով տարածաշրջանում թուլացնել Ռուսաստանի ազդեցությունը, իսկ Թուրքիան այն օգտագործում էր իր նպատակների համար:

Ռուս հեղինակներ Ե. Ուռազովայի, Օ. Ռեզնիկովայի, Ա. Սվարանցի, Գ. Ստառչենկովի, Զ. Չատաևի, Գ. Չուֆրինի, Ն. Կիրիևի և այլոց ուսումնասիրությունները ևս մեծ դեր են խաղում ուսումնասիրվող թեմայի տարբեր ասպեկտների պարզաբանման գործում[28]: Այս աշխատություններում առկա են բազմաթիվ նշանակալից փաստեր, որոնք էապես նպաստում են հետխորհրդային տարածաշրջանում և մասնավորապես Կենտրոնական Ասիայում Թուրքիայի քաղաքականությունը, ռուս-թուրքական մրցակցությունը, նավթի ու գազի համար մրցապայքարում Թուրքիայի քաղաքականությունն ավելի հստակ պատկերացնելու համար:

20-րդ դարի վերջին 21-րդ դարի սկզբին հետխորհրդային տարածաշրջանում Թուրքիայի վարած քաղաքականությունը և Կենտրոնական Ասիայի կրթության, մշակույթի, առևտրի, տնտեսության բնագավառներում իրականացրած գործողությունները վերլուծելու և ճիշտ ըմբռնելու համար մեծապես օգտակար են եղել արևմտյան հեղինակներ Զ. Բժեզինսկու, Գ. Վինրոուի, Գ. Ֆուլլերի, Լ. Զոնսոնի, Ա. Մանգոի, Հ. Փոփի, Ռ. Վեիթզի, Ս. Քորնելի, Է. Հերզինգի, Փ. Ռոբինսի, Ս. Լարրաբեի ու Ի. Լեսսերի, Հ. Քրամերի, արժեքավոր աշխատությունները[29]: Այսպես Գարեթ Վինրոուն իր

[27] Սաֆրաստյան Ռ., Թուրքիայի քաղաքականությունը սեպտեմբերի 11-ի ողբերգությունից հետո (2001 թ.), Թուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 1, Եր., 2002, էջ 89-103:

[28] Киреев Н. И., История этатизма в Турции, М., 1991, Kireev Nikolai, Turkey in Search of National Strategy of Eurasian Cooperation, Central Asia and The Caucasus, N 1(13) 2002, p. 18-26, Резникова О., Россия, Турция и Иран в Центральной Азии, Мировая экономика и международные отношения, но. 1, М., 1997, с. 54-65, Сваранц А., Пантюркизм в геостратегии Турции на Кавказе, М., 2002, Старченков Г. И., Нефть и газ в экономике и политике Турции (XIX-начало XXI вв.), М., ИВРАН, 2003, Чуфрин Г. И., О политике Ирана и Турции в отношении стран Центральной Азии, Новая Евразия. Отношения России со странами Ближнего Зарубежья, Сборник статей 2, М., 1994, с. 23-48, Уразова Е., Економическое сотрудничество Турции и тюрских государств СНГ, М., 2003 Chotoev Zakir, The Turkish Factor in the Evolution of the Central Asian Republics, Central Asia and the Caucasus, No. 2 (20), 2003, p. 73-80.

[29] Бжезинский З., Великая шахматная доска, М., Международные отношения, 2005, Fuller Graham E. and Lesser Ian O., with Paul B. Henze and J. F. Brown, Turkey's New Geopolitics From the Balkans to Western China, Westview Press, By RAND, 1993, Edmund Herzing, Iran and Central

ուսումնասիրություններում հիմնականում հստակորեն և օբյեկտիվորեն ընդգծում է հետխորհրդային ժամանակաշրջանում կենտրոնասիական տարածաշրջանում Թուրքիայի համար ստեղծված նոր աշխարհաքաղաքական բարենպաստ իրողությունները և դրա արդյունքում նրա հետապնդած շահերն ու նպատակները: Օրինակ «Թուրքիան և Կենտրոնական Ասիան» հոդվածում ներկայացված է Խորհրդային միության փլուզմամբ Թուրքիայի ղեկավարության մոտ ձևավորված պանթուրքական տրամադրությունները: Հեղինակը ներկայացնում է նաև Թուրքիայի և կենտրոնասիական երկրների միջև առևտրատնտեսական և էներգետիկ բնագավառներում ձևավորված կապերը, ինչպես նաև ռազմական և անվտանգության բնագավառներում համագործակցությունը: Այս ամենը նա վերլուծում է տարածաշրջանային զարգացումների համատեքստում՝ ցույց տալով Թուրքիա-Ռուսաստան, Թուրքիա-Իրան, Թուրքիա-Չինաստան հակասությունները և պայքարը գերակայության հասնելու համար:

Ատենախոսության մեջ լայնորեն օգտագործվել է հայկական, արտասահմանյան և թուրքական մամուլը, ինչպես նաև մի շարք պաշտոնական և վերլուծական կայքեր:

Asia, Central Asian Security, Editors Roy Alison, Lena Jonson, Royal institute of International Affairs, Brooking Institution Press, London-Washington, 2001, p. 171-198, Jonson Lena, Russia and Central Asia, Central Asia Security: the new international context, editors Roy Allison and Lena Jonson, Royal Institute of International Affairs, Brooking Institution Press, London-Washington, 2001, p. 95-126, Larrabe F. Stephen, Lesser O. Ian, Turkish Policy in an Age of Uncertainty, Center for Middle East Public Policy National Security Research Division. RAND, 2003, Larrabe F. Stephen, Turkey's Eurasian Agenda, The Washington Quarterly, Winter 2011, p. 103-120, Mango Andrew, The Turkish Model, Middle Eastern Studies, Cilt 29 (4), Ekim 1993, ss. 706-757, Robins Philip, Turkish Foreign Policy Under Erbakan, Survival, Vol. 39, No. 2, Summer 1997, p. 82-100, Winrow Gareth M., Turkey's Relations With The Transcaucasus and The Central Asian Republics, Perseption-Journal of International Affairs, Vol. 1, March-May, 1996, p. 128-145, Winrow Gareth M., Turkey and The Newly Independent States of Central Asia and The Transcaucasus, Middle East Review of International Affairs, Vol. 1, No. 2, July 1997, http://meria.idc.ac.il/journal/1997/issue2/jv1n2a5.html, Winrow Gareth M., Turkey and Central Asia. Central Asian Security. The New International Context/ Ed. By R. Allison, L. Jonson. London –Washington: Brookings Institution Press, 2001, p. 199-218, Weitz Richard, Towards a New Turkey-NATO Partnership in Central Asia, Turkish Policy Quarterly, Vol. 5, No. 2, 2006, http://ep.hudson.org/files/publications/Turkey_NATO_Partnership.pdf, Pope Huge, Sons of The Conquerors. The Rise of the Turkic World, New York. Washington. London, 2005 Cornell Svante E., Geopolitics and Strategic Alignments in the Caucasus and Central Asia, Perception. Journal of International Affeirs, Vol. 4, No. 2, June-Agust 1999, http://sam.gov.tr/perceptions/Volume4/June-August1999/cornell.pdf, Kramer Heinz, Will Central Asia Become Turkey's Sphere of Influence.- Perception: Journal of International Affairs, March-May, 1996, http://www.sam.gov.tr/perception/Volume1/March-May1996/ WILLCENTRALASIABECOMETURKEY.pdf
Kramer Heinz, AKP's "now" foreign policy between vision and pragmatism, Working Paper, FG 2, 2010/01, SWP Berlin June, 2010, http://www.swp-berlin.org/fileadmin/contents/products/arbeitspapiere/Krm_WP_Neu_ks.pdf

9. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, որոնք իրենց հերթին ստորաբաժանվում են ինը ենթագլուխների, վերջաբանից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածության մեջ խոսվում է թեմայի արդիականության և նպատակների մասին, պարզաբանվում է աշխատանքի գիտական նորույթը, հիմնավորվում է նրա գործնական նշանակությունը և տրված են թեմայի ժամանակագրական սահմաններն ու օգտագործված գրականության համառոտ տեսությունը:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ 1990-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԵՐԻՆ», իր հերթին բաղկացած է երեք ենթագլուխներից: *«Թուրքիայի արտաքին քաղաքականության վերածնումը Խորհրդային Միության փլուզման ժամանակաշրջանում»* ենթագլխում անդրադարձ է կատարվում ԽՍՀՄ փլուզման առաջին տարիներին հետխորհրդային տարածաշրջանում Թուրքիայի գործունեության ակտիվացմանը, ինչպես նաև նրա արտաքին քաղաքականության վերածնմանը: Թուրքիայում առաջացավ այն մտավախությունը, որ ԽՍՀՄ-ի փլուզմամբ նա կկորցնի Արևմուտքի համար իր նախկին դերը, ուստի ղեկավար շրջանները սկսեցին փնտրել Թուրքիայի արտաքին քաղաքական նոր կուրս՝ ավելի մեծ ուշադրությունը հատկացնելով մահմեդական աշխարհին, հատկապես թյուրքալեզու երկրներին: Այնուհետև լուսաբանվում են Կենտրոնական Ասիայում Թուրքիայի անմիջական ակտիվացման հիմնական նախադրյալներն ու դրան նպաստող մի շարք գործոնները: Բացի այդ հանգամանորեն ուսումնասիրվում են Կենտրոնական Ասիայում Թուրքիայի հետապնդած նպատակները և նրա մրցակցությունը ինչպես Ռուսաստանի Դաշնության, այնպես էլ Իրանի և Չինաստանի հետ: Ներկայացվում են տարածաշրջանում այս երեք երկրների շահերն ու հետաքրքրությունները: Վերլուծվում են եվրասիական գաղափարները և դրանց ազդեցությունը Կենտրոնական Ասիայի նկատմամբ Թուրքիայի քաղաքականության ձևավորման հարցում: Եվրասիական գաղափարների քարոզումը պանթյուրքիզմի նոր դրսևորում էր, որի նպատակն էր գերիշխանության հասնել եվրասիական տարածաշրջանում: Խորհրդային Միության փլուզմամբ Թուրքիայի համար ստեղծվեց նպաստավոր պայմաններ թյուրքալեզու երկրների հետ համագործակցելու և տարածաշրջանում հաստատվելու համար:

Երկրորդ ենթագլխում, որը վերնագրված է *«Առևտրատնտեսական հարաբերությունների հաստատումը Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի հանրապետությունների միջև 1990-ական թթ. սկզբներին»*, հանգամանորեն պարզաբանվում են բոլոր այն նախադրյալները, որոնք թույլ տվեցին Թուրքիային տարածաշրջանում ձևավորել առևտրատնտեսական հարաբերություններ և կատարել ֆինանսական ներդրումներ: Ներկայացված է

նաև կենտրոնասիական երկրների ղեկավարների վերաբերմունքը, Արևմուտքի աջակցությունը, որն էլ պայմանավորեց Թուրքիայի սկզբնական հաջողությունները: Թուրքիան կատարեց ֆինանսական ներդրումներ, հիմնեց թուրքական տարբեր բանկերի մասնաճյուղերը, իրենց գործունեությունը տարածաշրջանում ակտիվորեն սկսեցին թուրքական տարբեր կազմակերպություններն ու ընկերությունները: Այս ամենի արդյունքում 1990-ական թթ. սկզբին Թուրքիան Կենտրոնական Ասիայում, բացի Տաջիկստանից, ունեցավ լուրջ առևտրատնտեսական ծեռքբերումներ:

««Թուրքական զարգացման նմուշածևի» կիրառումը Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրներում» վերտառությամբ երրորդ ենթագլխում փորձ է արվում պարզաբանել Կենտրոնական Ասիայում հաստատվելու Թուրքիայի նպատակները, որն էլ արտահայտվեց «Թուրքական զարգացման նմուշածևի» /այսուհետև՝ ԹԶՆ/ կիրառմամբ: Այն իր մեջ ներառում էր աշխարհիկ պետության, ժողովրդավարության և ազատ շուկայական տնտեսության գաղափարները: Այս հայեցակարգի հեղինակն էր ամերիկյան RAND վերլուծական կենտրոնի առաջատար մասնագետներից Գրեհըմ Ֆուլլերը, իսկ Կենտրոնական Ասիայում այն կիրառելու հեղինակն էր ԱՄՆ պետքարտուղար Ջեյմս Բեյքերը: Լուսաբանվել են այն պատճառները, որոնցով Արևմուտքը մեծապես աջակցում էր ԹԶՆ-ի կիրառմանը՝ նպատակ ունենալով Թուրքիայի օգնությամբ կենտրոնասիական տարածաշրջանից դուրս մղել Ռուսաստանին: Կենտրոնական Ասիայի երկրների ղեկավարները դրական արձագանքեցին ԹԶՆ-ի կիրառմանը՝ հույս ունենալով ստանալ ներդրումներ և ավելի շուտ մերձենալ Արևմուտքին: Կենտրոնական Ասիայում քաղաքական զարգացման իր մոդելն առաջարկեց Իրանը, սակայն այն մերժվեց, որի համար հիմնական պատճառներ կարող ենք առանձնացնել Իրանի շիական և իսլամական պետություն լինելու հանգամանքը: Փորձել ենք վերլուծել այն պատճառները, որոնցով ԹԶՆ-ն 1990-ական թթ. սկզբներին իսկապես վերելք ապրեց: Այնուհետև քննարկվել է ԹԶՆ-ի կիրառման գործընթացը, արդյունքները և ձախողման պատճառները:

Ատենախոսության երկրորդ գլուխը վերնագրված է «ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ 1990-ԱԿԱՆ ԹԹ. ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ»: Այստեղ ուսումնասիրվում է 1990-ական թթ. երկրորդ կեսից Կենտրոնական Ասիայում Թուրքիայի իրականացրած արտաքին քաղաքականության հիմնական բնագավառները: 1990-ական թթ. կեսերից ուժեղացավ ռուս-թուրքական մրցակցությունը կենտրոնասիական տարածաշրջանի համար: Այս գլուխը ևս բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ *«Առևտրատնտեսական կապերը Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև 1990-ական թթ. երկրորդ կեսին»*, մանրամասն քննարկվում են Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջև առևտրատնտեսական համագործակցության խնդիրները: 1990-ական թթ. սկզբներին Թուրքիան Կենտրոնական Ասիայի երկրների առևտրի և տնտեսության բնագավառներում ունեցել էր հաջողություններ՝ հաստատելով բազմակողմանի համագործակցություն: Այս համագործակցությունը 1990-ական թթ. երկրորդ կեսին հիմնական գծերով շարունակվեց, որը 1990-ական

թթ. վերջերին անկում ապրեց: Այնուհետև լուսաբանվում են այդ անկման պատճառները, որը հիմնականում հեղինակը կապում է Թուրքիայում տեղի ունեցած տնտեսական և քաղաքական ճգնաժամերի հետ: Այս շրջանում թուրքական կապիտալը որոշակի թուլացավ, սակայն թուրքական ընկերությունները և կազմակերպությունները տարածաշրջանում շարունակում էին իրենց գործունեությունը, հատկապես ակտիվ էին շինարարական ընկերությունները:

Թուրքիան փորձեց իր մասնակցությունն ունենալ կենտրոնասիական նավթի և գազի տեղափոխման հարցում: Նրա հիմնական նպատակն էր այս տեսանկյունից դառնալ տարանցիկ երկիր: Թուրքիան որոշակի հաջողությունների հասավ, օգտվելով իր աշխարհաքաղաքական նպաստավոր դիրքից և ստանալով Արևմուտքի աջակցությունը, սկսեց իրագործել իր համար չափազանց կարևոր երկու նախագծեր՝ Բաքու-Թբիլիսի-Ջեյհանը և Բաքու-Թբիլիսի-Էրզրումը: Թուրքիան 1990-ական թթ. վերջին Կենտրոնական Ասիայում կարողացավ պահպանել իր տնտեսական ներկայությունը:

Երկրորդ ենթագլխում՝ *«Կրթա-մշակութային հարաբերությունները Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների միջև»*, խոսվում է կենտրոնասիական տարածաշրջանում Խորհրդային Միության փլուզումից հետո առաջացած գաղափարական ճգնաժամի մասին: Ներկայացվել է Իրանի և Թուրքիայի գաղափարական պայքարը և դրա հետևանքները: Թուրքիան փորձում էր տարածաշրջանում հաստատվել պանթյուրքիզմի, իսկ Իրանը՝ իսլամի գաղափարներով: Կենտրոնասիական թյուրքալեզու երկրներում ավելի մեծ տարածում գտան պանթյուրքիզմի, իսկ Տաջիկստանում՝ իսլամի գաղափարները:

Թուրքիայի կրթամշակութային համագործակցության հիմնական նպատակները և շահերը բխում էին պանթյուրքիզմի գաղափարներից: Այսինքն՝ Թուրքիայի նպատակն էր թյուրքալեզու երկրների հետ միասին ձևավորել միասնական կրթական և մշակութային համակարգ: Այդ նպատակով Թուրքիան տարածաշրջանում սկսեց հեռարձակել թուրքերեն հեռուստառադիո ծրագրեր և կազմակերպել թուրքերենի ուսուցման կենտրոններ: Բոլոր թյուրքալեզու երկրներում հիմնվեցին ավագ դպրոցներ, լիցեյներ և համալսարաններ: Մեծ ուշադրություն դարձվեց մասնագետների պատրաստմանը, ուստի թյուրքալեզու երկրներից բազմաթիվ երիտասարդներ եկան Թուրքիա կրթություն ստանալու նպատակով: Թուրքիան մեծ տեղ հատկացրեց նաև ռազմական կրթությանը: Այսինքն՝ թյուրքալեզու երկրների կրթության բնագավառներում Թուրքիան կարողացավ ապահովել իր ներկայությունը:

Թուրքիայի կրթա-մշակութային քաղաքականության մյուս կարևոր խնդիրը դարձավ միասնական լատինատառ այբուբենի քննարկումը: Չնայած իրականացրած աշխատանքներին Թուրքիային չհաջողվեց ստեղծել միասնական այբուբեն:

Երրորդ ենթագլխում՝ *«Ֆեթուլլահ Գյուլենի կազմակերպությունը և նրա գործունեությունը Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու*

հանրապետություններում», ներկայացվում է Գյուլենի համայնքի ձևավորումը և գաղափարները Թուրքիայում, այնուհետև Կենտրոնական Ասիայում նրա գործունեությունը և հետապնդած նպատակները: Գյուլենի համայնքը կենտրոնասիական լեզուներով թարգմանում էր Ղուրանը և այն տարածում: Գյուլենի կազմակերպությունը հիմնականում իրականացնում է կրթական գործունեություն՝ կենտրոնասիական երկրներում հիմնելով դպրոցներ և համալսարաններ: Գյուլենը միաժամանակ ունենալով հսկայական ֆինանսական միջոցներ կենտրոնասիական երկրներում կատարում է ֆինանսական ներդրումներ, մասնավորապես աջակցում է իր համայնքի անդամ գործարարներին:

Աշխատանքի երրորդ գլուխը վերնագրված է «ԹՈՒՐՔԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՍԻԱՅՈՒՄ «ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ (2002-2007 ԹԹ.)»: Այստեղ ներկայացված է «Արդարություն և զարգացում» կուսակցության իշխանության անցնելը, նրա արտաքին քաղաքականության նոր միտումները, Կենտրոնական Ասիայում կուսակցության գործունեությունը և ծրագրերը, ինչպես նաև Թուրքիայի պանթյուրքիստական քաղաքականությունը և դրա արդյունքները: Այս գլուխը նույնպես բաղկացած է երեք ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ *«Թուրքիայի արտաքին քաղաքականության նոր նախապատվություններ»*, մանրամասն ներկայացված է ԱԶԿ-ի արտաքին քաղաքականության նոր միտումները, որով նա փորձում էր ազդեցության հասնել Բալկաններում, Մերձավոր Արևելքում, Սև ծովի ավազանում, Հարավային Կովկասում և Կենտրոնական Ասիայում: Այսինքն կենտրոնասիական ուղղությունը ևս կարևորվեց և ԱԶԿ-ն իր առջև նպատակ դրեց տարածաշրջանում հասնել ազդեցության: ԱԶԿ-ի ղեկավարությունը փորձում էր տարածաշրջանում բարձրացնել Թուրքիայի աշխարհաքաղաքական և աշխարհատնտեսական դերը՝ նպատակ ունենալով նրան վերածելու «կենտրոնական պետության»:

Երկրորդ ենթագլխում՝ *«Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում 2002-2007 թթ.»*, ներկայացվում է ԱԶԿ-ի իրականացրած գործողությունները Կենտրոնական Ասիայում, որոնք իրենց մեջ ներառում են հանդիպումները, գագթնաժողովները և առևտրատնտեսական ու կրթամշակութային համագործակցությունը: ԱԶԿ-ն ավելի իրական հնարավորությունների վրա դրեց Կենտրոնական Ասիայի երկրների հետ համագործակցությունը: Թուրքական կառավարությունը ճգնաժամից դուրս գալով՝ ակտիվացրեց կենտրոնասիական երկրների հետ առևտրատնտեսական հարաբերությունները և շուտով դրանց ծավալները բավականին աճ արձանագրեցին: ԱԶԿ-ի ղեկավարությունը շարունակեց թյուրքալեզու երկրների հետ համագործակցությունը կրթության և մշակույթի բնագավառներում:

ԱԶԿ-ն, սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո, կարևորեց կենտրոնասիական տարածաշրջանը և սկսեց այս երկրների հետ ռազմական համագործակցությունը: Դա արտահայտվեց կենտրոնասիական թյուրքալեզու երկրներին ռազմական օգնություն և տեխնիկա տրամադրելով, միաժամանակ

Թուրքիայի նպատակն էր ակտիվացնել տարածաշրջանում ՆԱՏՕ-ի գործունեությունը: Թյուրքալեզու երկրներից մասնակցեցին «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագրին:

Երրորդ ենթագլխում՝ *«Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայում որպես պանթյուրքիզմի գաղափարախոսության արտահայտում»*, վերլուծվում է Կենտրոնական Ասիայում Թուրքիայի պանթյուրքիստական քաղաքականության նպատակներն ու հետապնդած շահերը: Որպես պանթյուրքիզմի դրսևորումներ ներկայացվում է «Թուրքական համագործակցության և զարգացման գործակալության» և Թյուրքալեզու երկրների գագաթնաժողովների գործունեությունը, ինչպես նաև վերլուծվում է դրանց արդյունքները: Ցույց է տրվում «թյուրք միասնության» գաղափարների տարածումը 1990-ական թթ. և Թուրքիայի փորձը դրանք օգտագործել Ղարաբաղյան հիմնախնդրի լուծման ընթացքում՝ փորձելով պաշտպանել Ադրբեջանի շահերը: Միաժամանակ Թուրքիան փորձեց 1990-ական թթ. սկզբին պանթյուրքիզմի գաղափարները օգտագործել Կենտրոնական Ասիայի երկրներում ապրող հայերի դեմ, սակայն այս երկրների ղեկավարների միջամտությամբ հակահայկական գործողությունները կասեցվեցին: Կենտրոնական Ասիայում Թուրքիայի պանթյուրքիստական ծրագրերը ժամանակավրեպ էին և լիովին ձախողվեցին:

ՎԵՐՋԱԲԱՆԻ մեջ, ամփոփելով ատենախոսության հիմնական արդյունքները՝ հեղինակը հանգում է հետևյալին.

• 1990-ական թթ. սկզբներից Թուրքիան Կենտրոնական Ասիայի նկատմամբ որդեգրեց այնպիսի քաղաքականություն, որի նպատակն էր տարածաշրջանում հասնել ազդեցության, հետագայում այդ քաղաքականությունն ավելի ակտիվացավ: Այդ քաղաքականությունը պայմանավորված էր ԽՍՀՄ-ի փլուզմամբ, Արևմուտքի գործուն աջակցությամբ և Ռուսաստանի Դաշնության դիրքերի թուլացմամբ: Այս պայմաններում հատկապես ակտիվացան եվրասիականության գաղափարները, որոնք իրականում պանթյուրքիստական նպատակներ էին հետապնդում:

• 1990-ական թթ. սկզբներին Թուրքիան սկսեց Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների հետ զարգացնել համագործակցությունը կապի, տրանսպորտի, տեխնոլոգիաների, բանկային համակարգի, տուրիզմի, շինարարության բնագավառներում, կատարել ֆինանսական ներդրումներ, ուստի կարողացավ որոշ չափով իրականացնել իր նպատակները:

• Կենտրոնական Ասիայի երկրների նկատմամբ Թուրքիայի քաղաքականության կարևոր հիմքերից մեկը դարձավ «թուրքական զարգացման նմուշաձևի» կիրառումը: Այն 1990-ական թթ. սկզբներին, կապված Արևմուտքի աջակցության, ՌԴ-ի դիրքերի թուլացման և կենտրոնասիական երկրների ղեկավարների դրական վերաբերմունքի հետ, տարածաշրջանում տարածում գտավ: Սակայն 1990-ական թթ. կեսերից հետաքրքրությունը «թուրքական զարգացման նմուշաձևի» նկատմամբ աստիճանաբար նվազեց և կենտրոնասիական երկրների քաղաքական

վերնախավը նախընտրեց վերցնել միայն նրա որոշ մասը: Արդյունքում Թուրքիայի քաղաքականությունն այս ուղղությամբ ձախողվեց:

• Թուրքիան 1990-ական թթ. երկրորդ կեսից շարունակեց զարգացնել առևտրատնտեսական համագործակցությունը Կենտրոնական Ասիայի երկրների հետ: 1990-ական թթ. վերջերից սկսված տնտեսական ճգնաժամը իր բացասական ազդեցությունն ունեցավ նաև Թուրքիայի և կենտրոնասիական երկրների համագործակցության վրա: Սակայն դրանք աշխուժացան 21-րդ դարի սկզբին՝ արձանագրելով մեծ աճ: Այս ամենի արդյունքում Թուրքիային հաջողվեց պահպանել իր ներկայությունը և որոշ առաջընթաց արձանագրեց կենտրոնասիական երկրների հետ առևտրի և տնտեսության բնագավառներում:

• Թուրքիային մեծապես հետաքրքրում էր կենտրոնասիական նավթը և գազը: Այս հարցում Թուրքիայի ունեցած որոշ հաջողությունները կապված էին նրա աշխարհագրական նպաստավոր դիրքի և Արևմուտքի՝ մասնավորապես ԱՄՆ-ի աջակցության հետ: Թուրքիան շարունակում է էներգետիկ առումով տարանցիկ երկիր դառնալու իր քաղաքականությունը:

• Կենտրոնական Ասիայի երկրների կրթության և մշակույթի բնագավառներում իր ազդեցությունը տարածելու համար Թուրքիան սկսեց իր գործունեությունը այդ երկրների համապատասխան բնագավառներում: Այդ նպատակով նա ստեղծեց մի շարք ֆոնդեր ու միություններ, հիմնեց ավագ դպրոցներ, լիցեյներ ու համալսարաններ, հրատարակեց դպրոցական դասագրքեր, կազմակերպեց Թուրքիայում կենտրոնասիական երիտասարդների կրթությունը: Թուրքիան մեծ ջանքեր գործադրեց լատինատառ այբուբենին անցնելու համար, սակայն կարծում ենք այս հարցում նրա հաջողությունները նվազագույն են, քանի որ սպասված միասնական կրթական համակարգի ձևավորումը չստացվեց: Այս ամենի արդյունքում կենտրոնասիական թյուրքալեզու երկրների կրթության բնագավառներում Թուրքիան կարողացավ ունենալ իր ներկայությունը: Սակայն պետք է նշել, որ Թուրքիայի գործունեությանը հակազդում են կենտրոնասիական երկրների ղեկավարները՝ նպատակադրվելով իրենց ազդեցության տակ պահել այդ հաստատությունները:

• Թուրքիան որոշ աշխատանքներ իրականացրեց նաև կենտրոնասիական երկրների մշակույթի բնագավառներում՝ նպատակադրվելով ձևավորել միասնական թյուրքական մշակույթ: Այդ նպատակով կազմակերպվում էին տարբեր հանդիպումներ, գագաթնաժողովներ և միջոցառումներ: Իրականացրած գործողությունները ամբողջական չէին, ուստի Թուրքիան իր ծրագրած միասնական թյուրքական մշակութային միությունը չկարողացավ ձևավորել:

• 1990-ական թթ. սկսած Կենտրոնական Ասիայում իր գործունեությունն սկսեց Ֆեթուլլահ Գյուլենը, որը տարածաշրջանում ներկայացնում էր Թուրքիայի շահերը: Նա Կենտրոնական Ասիայի երկրներում, բացի Տաջիկստանից, հիմնադրեց դպրոցներ ու համալսարաններ, իր ունեցած խոշոր բիզնես ցանցի միջոցով վարկավորում էր տեղացի, իր շարժման անդամ գործարարներին և այստեղ նույնպես փորձում էր ձևավորել նոր մտավորականություն: Գյուլենին հաջողվեց կրթական բնագավառում ապահովել իր ներկայությունը, սակայն

այսօր նրա գործունեությունը ևս սահմանափակվում է կենտրոնասիական երկրների ղեկավարության կողմից:

• 2002 թ. Թուրքիայում իշխանության գլուխ անցած «Արդարություն և զարգացում» կուսակցությունը վերանայեց Թուրքիայի արտաքին քաղաքականությունը՝ փորձելով տարածաշրջանում բարձրացնել նրա աշխարհաքաղաքական դերը: Այս քաղաքականությունն իր արտահայտումը գտավ նաև ԱԶԿ-ի կենտրոնասիական քաղաքականություն մեջ՝ դարձնելով այն ավելի ակտիվ ու նպատակասլաց:

• ԱԶԿ-ն դժգոհ էր Կենտրոնական Ասիայի երկրների հետ նախկին համագործակցությունից, որը 1990-ական թթ. վերջերին Թուրքիայում տեղի ունեցած ֆինանսատնտեսական և քաղաքական ճգնաժամերի արդյունքում անկում էր ապրել: ԱԶԿ-ն կենտրոնասիական երկրների հետ համագործակցությունը դրեց ավելի պրակտիկ-իրական հիմքերի վրա՝ պայմանավորված փոխադարձ շահերով ու հետաքրքրություններով: Նա հատկապես մեծ ուշադրություն դարձրեց առևտրատնտեսական հարաբերությունների զարգացմանը: Արդյունքում Թուրքիային հաջողվեց Կենտրոնական Ասիայի երկրների տնտեսություններում ապահովել իր ներկայությունը:

• Թուրքիան սկսեց Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների հետ համագործակցել ռազմական և անվտանգության բնագավառներում: Թուրքիայի այս քաղաքականությանը նպաստում էր նրա ՆԱՏՕ-ի անդամ լինելու հանգամանքը: Թուրքիան սկսեց ռազմական օգնություն ցույց տալ կենտրոնասիական երկրներին՝ այդ թվում մատակարարելով ռազմական տեխնիկա: Միաժամանակ աջակցում է նաև այդ երկրներից ռազմական մասնագետների պատրաստմանը: Ըստ երևույթին Թուրքիան դանդաղորեն փորձում է իր ներկայությունը ապահովել կենտրոնասիական երկրների ռազմական բնագավառներում: Իսկ 2001 թ. սեպտեմբերի 11-ի դեպքերից հետո ջանում է ստանձնել կամրջի դեր՝ միացնելով ՆԱՏՕ-ն և Եվրասիան:

• «Թյուրքական համագործակցության և զարգացման գործակալությունը» լայն աշխատանքներ իրականացրեց Կենտրոնական Ասիայի երկրների կրթության և մշակույթի բնագավառներում և այս տեսանկյունից ապահովեց այս երկրներում իր ներկայությունը և գործունեությունը: Սակայն պանթյուրքիստական գաղափարները քարոզելու տեսանկյունից կազմակերպությունը ձախողվեց: 1992 թ. մինչև օրս գումարվում են թյուրքալեզու երկրների գագաթնաժողովներ, դրանք շոշափելի արդյունքներ չեն ունեցել, իսկ Թուրքիան այս տեսանկյունից չի հասել իր նպատակին՝ ձևավորել թյուրքական միություն:

• 1990-ական թթ. սկզբներին Թուրքիան փորձեց պանթյուրքիստական գաղափարներն օգտագործել Ղարաբաղյան պատերազմի ժամանակ՝ կենտրոնասիական թյուրքալեզու երկրներում հրահրելով հակահայկական տրամադրություններ: Սակայն Թուրքիայի այս քաղաքականությունը ձախողվեց, քանի որ Կենտրոնական Ասիայի երկրները դիվանագիտական հարաբերություններ հաստատեցին Հայաստանի Հանրապետության հետ, իսկ Ղարաբաղի հարցում՝ պահպանում են չեզոքություն:

• Վերջին երկու տասնամյակներին Թուրքիան փորձում է Կենտրոնական Ասիայում իրականացնել թյուրքալեզու ժողովուրդներին իր ղեկավարությամբ համախմբելու ծրագիրը, սակայն ինչպես ցույց են տալիս զարգացումները, այս ծրագրերը դեռևս լուրջ հաջողություններով չեն պսակվել:

Ատենախոսության թեմայով հրատարակված աշխատանքները

1. Թուրքիա-Ուզբեկստան միջպետական հարաբերությունները 20-րդ դարի վերջին և 21-րդ դարի սկզբին. Խ. Աբովյանի ծննդյան 200-ամյակին նվիրված 54-րդ գիտաժողովի նյութերի ժողովածու, Երևան, «Մանկավարժ» հրատ., 2010 թ., էջ 343-345:
2. «Թուրքական զարգացման նմուշածևի» կիրառումը Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու հանրապետություններում, Մերձավոր Արևելք, հ. 7, ՀՀ ԳԱԱ, 2011 թ., էջ 204-210:
3. Թուրքիայի և Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների միջև հարաբերությունների հաստատման հարցի շուրջ /1990-ական թթ. 1-ին կես/, Թյուրքագիտական և օսմանագիտական հետազոտություններ, հ. 7, Երևան, 2011 թ., էջ 221-237:
4. Թուրքիայի քաղաքականությունը Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրներում «Արդարություն և զարգացում» կուսակցության կառավարման առաջին տարիներին /2002-2007 թթ./. նոր միտումներ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, հ. 28, Երևան, 2011, էջ 292-299:
5. Թուրքիայի առևտրատնտեսական հարաբերությունները Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրների հետ (1990-ական թթ. 2-րդ կես), Կանթեղ, գիտական հոդվածների ժողովածու, N 4 (49), Երևան, 2011, էջ 138-144:

МИНАСЯ НЕЛЛИ АРТАШЕСОВНА

ПОЛИТИКА ТУРЦИИ В ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ В КОНЦЕ 20-ГО НАЧАЛЕ 21-ГО ВЕКОВ

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.02-"Всемирная история".
Защита состоится 12-ого декабря 2011 г., в 15:30 часов на заседании специализированного совета 006, действующего при Институте Востоковедения НАН РА, по адресу: 0019, г. Ереван, пр. Маршала Баграмяна, 24/4.

Резюме

Диссертация посвящена изучению и анализу политики Турции в период первых двух десятилетий после распада СССР, что имеет как научное, так и политическое значение и актуальность.

Выбор темы диссертационного исследования обусловлен необходимостью всестороннего и основательного исследования проблем, связанных с региональной политикой Турции конца 20-го и начала 21-го веков. Для достижения указанной цели автор диссертации поставила перед собой следующие задачи:

- Исследовать те новые перспективы, которые возникли у Турции в условиях, создавшихся политических реалий в Центральной Азии вследствие распада СССР.
- Уточнить шаги, направленные на укрепление геополитических и политических позиций Турции в Центральной Азии, и способствующие этому основные факторы.
- Рассматреть основные предпосылки и активизацию политики Турции в Центральной Азии
- Проанализировать конкуренцию Турции и Ирана в Центральной Азии, отношение России к этому вопросу, а также турецко-китайскую конкуренцию в регионе и ее особенности.
- Выявить все обстоятельства, которые привели к популяризации "турецкой модели развития", а также причины, побудившие центральноазиатские страны отказаться от этой модели.
- Показать развернувшуюся в регионе торгово-экономическую деятельность Турции, а также ее последствия.
- Представить идеологические основы действий Турции в Центральной Азии, развертывание образовательно-культурных мероприятий, в числе которых мероприятия, проводимые движением живущего в США пропагандиста мусульманской идеологии Фетуллаха Гюлена, содействие которому оказывает турецкое правительство.
- Выявить новые тенденции внешней политики Партии справедливости и развития (ПСР) в центральноазиатском регионе, в том числе представить

осуществленные программы и мероприятия партии, проводимые в данном регионе.

- Выявить пантюркистские цели и политику Турции в Центральной Азии. Представить "Турецкое агентство сотрудничества и развития" и деятельность саммитов тюркоязычных стран, как выражение пантюркизма, и их результаты.

Актуальность темы обусловлена исследованием целей и особенностей одной из важных направлений внешней политики Турции в период двух десятилетий после краха СССР. Среднеазиатские тюркоязычные страны всегда интересовали Турцию, и распад СССР дал возможность установления многостороннего сотрудничества с этими странами. Исследуемая тема связана с выполнением приоритетов внешней политики Турции и ее комплексное изучение имеет большое значение для более глубокого понимания некоторых проблем национальной безопасности РА. Тема диссертации пока еще не удостоена отдельного и всестороннего изучения в местной туркологии. Эта работа своим содержанием и постановкой вопросов является опытом представить региональную политику Турции и перспективы ее претензий путем изучения фактического материала, государственных программ, докладов, отчетов и научных исследований.

Методология работы основана на научной объективности, историческом сравнении и историко-критических принципах, которые позволяют автору затронутые в диссертации вопросы рассмотреть в диахроническом всеобщем единстве. Работа состоит из введения, трех глав, заключения, списка использованных источников и литературы.

В первой главе диссертации - "Политика Турции в Центральной Азии в начале1990-х годов" - проанализированы изменения политики Турции, обусловленные распадом СССР. Создается возможность для проникновения Турции в центральноазиатский регион с попыткой устранить влияние России. Турция приступила к разностороннему сотрудничеству с тюркоязычными странами Центральной Азии, для достижения большей эффективности особо акцентируя исторические, культурные, этнические, языковые общие черты. В 1990-е годы Турция начала активизировать торгово-экономическое сотрудничество со странами Центральной Азии, совершала финансовые инвестиции путем создания отделений турецких банков. Широкую деятельность развернули различные организации и компании Турции, таким образом в экономической сфере Турция добилась значительных успехов.

С целью укрепленя своего влияния в тюркоязычных странах Центральной Азии Турция предложила свою модель политического развития, которая включала в себя принципы светского государства, демократии и свободной рыночной экономики. Сначала "образец турецкого развития" тюркоязычными странами Центральной Азии был принят с энтузиазмом, однако впоследствии они взяли только некоторые части модели, в результате чего политика Турции в этом направлении не имела успеха.

Вторая глава данной работы – "Политика Турции в Центральной Азии второй половины 1990-х годов"- является логическим продолжением первой главы. Здесь также обсуждается торгово-экономическое сотрудничество, объем которого в 1990-е годы значительно сократился в связи с экономическим и политическим кризисом в Турции и ее ограниченными возможностями. Для торгово-

экономического сотрудничества были важны также вопросы центральноазиатских нефти и газа. Здесь Турция достигла определенных успехов, пользуясь своим выгодным геополитическим положением, и, заручившись поддержкой Запада, начала осуществление чрезвычайно важных для себя 2-х проектов: Баку-Тбилиси-Джейхан и Баку-Тбилиси-Эрзрум. Таким образом, Турции удалось сохранить свое экономическое присутствие в странах Центральной Азии.

Турция принимает активное участие в сфере культуры и образования тюркоязычных стран Центральной Азии. Были созданы школы, лицеи, университеты, организованы культурные мероприятия. В сфере образования широкую деятельность развернул также Фетуллаха Гюлен и его община, также создавая школы и университеты. Турции удалось обеспечить свое присутствие в сфере образования стран региона.

В третьей главе - "Политика Турции в Центральной Азии в период правления Партии справедливости и развития /2002-2007 гг./" - проанализированы внешнеполитические приоритеты и задачи Партии справедливости и развития. ПСР придала большое значение центральноазиатской политике, сделала более реальной возможность сотрудничества с этими странами. Она акцентировала внимание на развитие торгово-экономического сотрудничества, и вскоре его объем стал увеличиваться. Руководство ПСР также уделяет большое внимание развитию сотрудничества в военной сфере, а также образования и культуры, с целью которого организует консультации, конференции и т.д. ПСР считает особенно важным геополитическое значение Турции, пытаясь представить ее как транзитную страну.

Политика Турции в отношении тюркоязычных стран Центральной Азии несет в себе идеи пантюркизма, что более ярко начало выражаться в начале 1990-х годов, когда правящие круги Турции объявили о рождении тюркского мира. Идеи пантюркизма в основном проповедовали "Турецкое агенство сотрудничества и развития" и саммиты тюркоязычных стран. В странах региона впервые открылись отделения и реализуются много программ. До сих пор организовываются саммиты для тюркоязычных стран, но они не имеют успеха. Идеи пантюркизма проповедовались, в частности, во время карабахской войны, когда Турция пыталась создать антиармянское настроение в странах Центральной Азии, но он не достигла успеха. В целом Турция стремится создать союз тюркоязычных стран, если не политического, то, по крайней мере, экономического и культурного, что тоже не удается. Пантюркистская политика Турции полностью провалилась, но ее интересы в Центральной Азии долгосрочны.

MINASYAN A. NELLY

TURKISH POLICY IN CENTRAL ASIA AT THE END OF 20TH CENTURY AND IN THE BEGINNING OF 21ST CENTURY

The Dissertation is submitted for the pursuing of the Scientific Degree of the Doctor of History in the Field of World history 07.00.02.
The Defense of the Dissertation will take place at 15:30 on December 12, 2011 at the Meeting of Specialized Council 006 acting at the Oriental Studies Institute of NAS RA. Adress: 0019, Yerevan, av. Marshal Baghramyan, 24/4.

Summery

The dissertation is dedicated to the analysis and study of post-soviet period policy in Turkey during the last two decades, and has both academic importance, political significance and relevance. Selection of the topic of dissertation is determined by the need for comprehensive and fundamental study of issues related to the regional policy of the Turkish Republic implemented at the and 20th and in the of beginning 21st century.

- To study of Turkish geopolitical opportunities in Central Asia in the emerged post-soviet political.
- To highlight the steps aimed at enhancement of geopolitical and political positions of Turkey in Central Asia and the preconditions contributing to it.
- To study the activization of Turkish policy in Central Asia and its precodditions.
- To analyze the Turkish-Iranian competition in Central Asia, the attitude of Russia as well as the Turkish-Chinese competition in the region and its peculiarities.
- To reveal all the circumstances, which contributed to the attractiveness of "Turkish development model" and its denial by Central Asian countries.
- To indicate the framework of trade and economic activities of Turkey and their impact.
- To present the ideological background of the activities implemented by Turkey in Central Asia, cultural and educational activities as well as the events carried out by the community of Fetullah Gulen, who live in America and propagandizing Muslim ideology.
- To identify the new trends and tendencies of the JDP foreign policy in Central Asia, as well as present the programs and measures implemented by the party in region.
- To analyze the pan-Turkic policy and ambitions in Central Asia

The relevance of the topic of dissertation is determined by the study of one of the main directions in Turkish post-soviet foreign policy during the last two decades. Turkey has always been interested in Turkic Republics of Central Asia and the collapse of USSR gave an opportunity for multilateral cooperation with these countries.

The dissertation deals with the realization of Turkish foreign policy priorities, its comprehensive study plays a significant role from the perspective national security of Republic Armenia. The topic of the dissertation has not been a focus of study yet in Armenian turkology. By its content and with the issues raised, this research is an attempt to present the regional policy of Turkey and perspectives of its ambitions through the review of factual materials, public policies, reports and scientific researches. The

scientific objectivity, comparative historical and historical analytical methods lie on the basis of the research. This provided the author an opportunity to review the issues raised in the general extratemporal unity. The research consists of introduction, three chapters, conclusion and bibliography.

In the first chapter of the dissertation "Turkish Foreign Policy in Central Asia in the Beginning of 1990's" the changes in the Turkish foreign policy determined by the collapse of Soviet Union are presented. An opportunity appeared for Turkey to intervene into Central Asian region, attempting to abolish the Russian influence. Turkey started to cooperate with these countries in various areas, focusing mainly on historical, cultural, ethnic and linguistic similarities with Central Asian Turkic countries for making the collaboration more effective. In the beginning of 1990es Turkey started to promote trade and economic relations with Central Asian countries, made financial investments, opening branches of Turkish banks. Wide range of economic activities were carried out by various Turkish companies and organizations and thus Turkey achieved substantial economic success. For expanding its influence on Turkic countries of Central Asia, Turkey offered its model of political development which comprised the principles of a secular country, democracy and free market economy. At first the model was accepted by the Turkic countries of Central Asia with enthusiasm, however later only some elements of the model were taken by them and as a result the Turkish policy in this field didn't succeed.

The second chapter of the dissertation 'Turkish Foreign Policy in Central Asia in the Second Half of 1990's" is a logical continuation of the first one. In this section, again, the trade and economic cooperation is considered. Starting from mid 1990-ies the scope of this cooperation reduced, Determined by the political and economic crisis in Turkey and scarcity of resources available. The Central Asian oil and gas issue plays an important role in trade and economic relations. Due to its beneficial geopolitical position Turkey achieved certain success in this area, and with the support of of western countries implemented two major projects: Baku-Tbilisi-Geyhan and Baku-Tbilisi-Erzrum. Thus Turkey managed to preserve its economic \stand in Central Asian countries. in Central Asian Turkic countries Turkey carried out number of activities in the field of education and culture, namely, ounded high schools, lyceums, universities and organized number of cultural events. Fetullah Gulen and its community also implemented number of activities in the field of education, again founding schools and universities. Thus Turkey managed to attain an important role in the field of education in the region.

The trends and goals of JDP foreign policy are considered in chapter three "Turkish Foreign Policy in Central Asia During The Rule of "Justice and Development" Party /2002-2007/". The JDP attached high importance to the Central Asian policy and put the cooperation with these countries on a more realistic background. The party especially prioritized trade and economic relations and soon its volume increased. JDP leadership also attached high importance to the development of cooperation in the field of education, culture and military service. Workshops conferences and other events were organized to this end. JDP especially focuses on geopolitical position of Turkey trying to make it a transit country.

The policy of Turkey in Central Asian countries contains elements of panturkism which became especially vivid in the beginning of 1990 when the leadership of Turkey announced the birth of the so-called Turkish world. The ideas of panturkism were mainly propagated by "Turkish Development and Cooperation Agency" and in the

summits of Turkic countries. The "Turkish Development and Cooperation Agency" was the first to open its offices in the region and implemented various projects. The summits of Turkic countries are being organized up till now, but they haven't brought to any substantial success yet. The ideas of panturkism were especially propagated during the Nagorno-Karabakh conflict, when Turkey was trying to spread anti-Armenian vein in Central Asian countries but it didn't manage to. As a whole Turkey is trying to establish a union of Turkic countries if not from political at least from economic and cultural prospective, though it fails to. The panturkic policy of Turkey totally failed however it has long term interests in Central Asia.